ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 2.2-րդ, 2.4-րդ և 2.5-րդ կետերով.

հաշվի առնելով այն, որ 2018 թվականի համար նախատեսվող հանրային պաշտպանների թափուր տեղերի (հաստիքների, **այսուհետ՝ Թափուր տեղեր**) քանակը կազմում է ընդամենը **13**, այն է՝

1. Արագածոտնի մարզ - **մեկ տեղ՝** 0,25 հաստիք քրեական ուղղվածության.
2. Արմավիրի մարզ - **երկու տեղ՝** մեկ լրիվ հաստիք քրեական ուղղվածության, մեկ 0,5 հաստիք քրեական ուղղվածության.
3. Լոռու մարզ - **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության.
4. Կոտայքի մարզ - **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության.
5. Շիրակի մարզ - **մեկ տեղ՝** 0,5 հաստիք քրեական ուղղվածության.
6. Սյունիքի մարզ - **երեք տեղ՝** մեկ 0,5 հաստիք քրեական ուղղվածության, երկու 0,25 հաստիք քրեական ուղղվածության.
7. Երևան քաղաք - **չորս տեղ՝** 4 լրիվ հաստիք քրեական ուղղվածության.

նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում հանրային պաշտպանի թափուր հաստիքներ կարող են առաջանալ ոչ միայն տարեվերջին, այլ նաև տարվա ընթացքում, ինչպես նաև այն, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս, որպես կանոն, նախապատվությունը տրվում է հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբաններին.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2018 թվականի համար հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացնել **քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ** (**այսուհետ՝ Մրցույթ**)՝ Երևան քաղաքի և մարզերի

21 նոյեմբերի 2017թ.
թիվ 456-Լ

հանրային պաշտպանների Թափուր տեղերը համալրելու համար:

2. Սահմանել, որ՝

1) **Մրցույթի գրավոր փուլը** կանցկացվի ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-3 հասցեում (ՀՀ փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ) **2017 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 11.00-ին:** Մրցույթի գրավոր փուլի տևողությունը սահմանվում է 4 (չորս) ժամ.

2) Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն որոշումը հրապարակելու օրվանից մինչև 2017 թվականի նոյեմբերի 28-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում.

3) փոստով ուղարկված դիմումները չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2017թ. նոյեմբերի 28-ից հետո.

4) **Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կհրավիրվի հարցազրույցի** Կարգի 4.11 կետի համաձայն:

3. Հաստատել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու դիմումի ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. Հաստատել մրցույթի քննական թերթիկի ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

5. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- Մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում և վարչական շենքում (4-րդ հարկ) գտնվող հայտարարությունների տախտակի վրա.

- օժանդակել մրցութային հանձնաժողովին Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

21 նոյեմբերի 2017թ.
թիվ 456-Լ
ք. Երևան

Հավելված թիվ 1
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 21.11.2017թ. թիվ 456-Լ որոշման

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատին

_____ից
(անուն, ազգանուն)

արտոնագրի № _____

հասցե՝ _____

էլեկտրոնային փոստի հասցե՝

_____

մասնագիտական ուղղվածությունը՝

_____
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

«____» նոյեմբերի 2017թ.

Դ Ի Մ ՈՒ Մ
հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով
անցկացվող մրցույթին մասնակցելու

Ցանկանում եմ մասնակցել հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կազմակերպվող մրցույթին վերը նշված մասնագիտական ուղղվածությամբ, հետևյալ աշխատավայրում *(նշել միայն մեկ նախընտրած տարբերակը)*՝

☐ Երևան քաղաք
☐ _____ մարզ
(նշել մարզի անվանումը)

Հայտնում եմ, որ՝
- տիրապետում եմ համակարգչային հմտությունների.
- համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ով սահմանված դրույթների հետ:

Կից ներկայացվում է մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

Հավելված թիվ 2
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 21.11.2017թ. թիվ 456-Լ որոշման

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Լուսանկար

Կ.Տ.

Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով _____ ուղղվածության մրցույթին
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

մասնակցող հավակնորդ _____:
(անուն, ազգանուն)

1. **Մրցույթի գրավոր փուլի անցկացման վայրը՝** քաղաք Երևան, Զաքիյան փողոց 7-3 (ՀՀ փաստաբանական դպրոց, 3-րդ հարկ):

Գրավոր փուլի անցկացման ամսաթիվը՝ 2017թ. դեկտեմբերի 4

Սկիզբը՝ ժամը 11^{00}, ավարտը՝ ժամը 15^{00}

Գրանցման ժամանակահատվածը՝ նույն օրը՝ ժամը 10^{00}-10^{55}

2. Հարցազրույցի անցկացման օրվա, ժամանակի և վայրի մասին մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կծանուցվի լրացուցիչ էլեկտրոնային փոստի միջոցով:

Քննությանն անհրաժեշտ է ներկայանալ սույն քննական թերթիկով և անձնագրով կամ փաստաբանական գործունեության վկայականով: